# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/349 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 8 | Մեկտեղանի մահճակալ | Մեկտեղանի մահճակալ | Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ | Մեկտեղանի մահճակալ: Մահճակալի արտաքին չափսերը (երկարություն x լայնություն x բարձրություն) չպետք է գերազանցեն 95 x 105 x 210 սմ, իսկ քնատեղիի չափսերը՝ ոչ ավել քան 90 x 200 սմ, ապահովելով տարածության խնայողություն և լիարժեք հարմարավետություն: Մահճակալի կորպուսային մասերը պետք է պատրաստված լինեն ԼԴՍՊ-ից (լամինացված թելիկաձև սեղմված փայտանյութ), որն ունի անհրաժեշտ ամրություն, իսկ դրսի՝ արտաքին երեսպատման հատվածները պետք է պատրաստված լինեն ՄԴՖ-ից (միջին խտության մանրաթելային փայտանյութ)՝ ապահովելով մեխանիկական ավելի մեծ դիմացկունություն: Մահճակալի ոտքերը պետք է լինեն մետաղական: Հիմքը պետք է կազմված լինի ճկվող փայտերից, որոնք ունեն օրթոպեդիկ հատկություններ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Մահճակալի հետ միասին անհրաժեշտ է տրամադրել նաև գործարանային արտադրության օրթոպեդիկ ներքնակ, որը կհամապատասխանի նշված քնատեղիի չափսերին՝ այսինքն՝ ոչ ավելի քան 90 x 200 սմ, կունենա բարձրություն առնվազն 19 սմ, պատշաճ խտությամբ շերտավոր կառուցվածք՝ օրթոպեդիկ աջակցության համար, իսկ երեսպատման գույնը ցանկալի է բաց երանգների: Ապրանքը պետք է ունենա համապատասխանության սերտիֆիկատ: Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային ստվարաթղթե փաթեթավորմամբ: Գույնը կամ գունային համադրումները համաձայնեցնել գնորդի հետ: Առաքումը և տեղադրումը կատարվում է՝ ըստ պատվիրատուի առաջարկած հասցեների, մատակարարի միջոցների հաշվին: Ապրանքի փոխադրումը՝ սեփական տրանսպորտային միջոցներով, բեռնաթափումը՝ ըստ հասցեի և անհրաժեշտ քանակի: Ապրանքի (մահճակալ և ներքնակ) համար պարտադիր պայման է չօգտագործված լինելը և առնվազն 1 տարվա երաշխիքը: Երաշխիքի կտրոնի առկայությունը պարտադիր է: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ИП Арман Габриелян Ваганович в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/349 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 8 | | | | |